ծել ըստ կամաց իւրեանց՝ յափշտակել զգերեզմանատունն՝ զրկել զՀայս, հանել 'ի գերեզմանաց զհին և զնոր ննջեցեալս, չընդունիլ զվաւերական գրեանս նոցին, այլովքն հանդերձ։ Ասա դարձուցանէ զբանն առ Կուսակալ և առ դատաւորն. Թագաւորն Գաղղիոյ մշտնջենաւոր բարեկամ է ասէ, Տէրութեան մերոյ և կամիմ հաստատուն պահել զբարեկամութիւնն և զդաշնադրութիւնն. չնեղել զկղերս եւ զվաճառականս նոցա հակառակ ոգւոյն դաշնադրութեան։ Իսկ Հայք հարկատու հպատակ են Տէրութեան իմոյ. 'ի հարկէ հպատակասիրութեան յամենայնի պարտ է պաշտպանել և խնամել զնոսա և բառնալ զնեղութիւնս նոցա։ Ի բաց կացէք յագահութենէ եւ զամենայն ինչ արդարութեամբ գործեցէք. մի լիցի ձեզ զմի կողմն զըրկել, և զմիւսն պաշտպանել ընդդէմ Կայսերական կամացս. զգոյշ լերուք չհանրացուցանել զվաւերական գրեանս երկուց կողմանց։ Եթէ ըստ գրելոյ Դեսպանին զգետինն զայն յառաջ քան զ120 ամս գնեալ իցեն Լատինք օրինօք դատարանի և լեալ 'ի ձեռս նոցա. թողեալ իցեն անդ ըզմեռեալս իւրեանց, և Հայք տարապարտուց ընդխմացեալք՝ խափանել զհակառակութիւնն. իսկ եթէ Լատինք աւելի յափշտակեալ իցեն՝ պաշտպան լինել Հայոց՝ և մի թոյլ տալ նեղել զնոսա, և բառնալ զխռովութիւնն։ Եւ եթէ լսելի լինիցի յունկն իմ թէ սակս ագահութեան զմի կողմն զրկեալ՝ եւ զմիւսն պաշտպանեալ էք, ոչ երբէք ունիք զերծանիլ 'ի պատիժ պատուհասից. նոյն օրէն է և կաշառառուաց՝ զի մին բարեկամ և դաշնադիր է Տէրութեանս, և միւսն հարկատու հպատակ, ՌՃՂԱ (1776)։

Թէպէտեւ եհաս այս հրովարտակն յԵրուսաղէմ, այլ գործն աւարտեալ էր, և Լատինք տիրեալ տեղւոյն, եւ չէր հնար վերստին թափել զայն 'ի ձեռաց նոցին։ Սակայն Կուսակալն վերստին կազմեաց ժողով, և զմի մասն հրովարտակին ետ ընթեռնուլ, և արձակեաց զնոսա պատուիրելով երկուց կողմանց կալ մնալ սիրով ընդ միմեանս։

Յետ այսր վերջին ժողովոյ մատեան Լատինք առ դատաւորն՝ զի արդարացուցանել կարասցեն զինքեանս առաջի Արքային և Դեսպանին, և սկսան պատմել նմա ըզխնդիրն ըստ ախորժակի իւրեանց՝ զի 'ի գրի հարեալ